

Քիմիայի ամբիոնի միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերը

1. Ամբիոնի վերամասնագիտացման հետ կախված ճշգրտումներ են մտցվել նաև քիմիայի ամբիոնի գիտահետազոտական աշխատանքների միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի մեջ:

Նախկին ծրագրերը կազմվել են ամբիոնի հետազոտական աշխատանքների հիմնարար ուղղություններին համապատասխան: Այդ ուղղությունները շոշափել են հետևյալ հետազոտական բնագավառները.

1. Բարձր էներգիաների քիմիա
2. Բաղադրանյութերի քիմիա
3. Ինքնատարածվող քիմիական ռեակցիաների պրոդուկտների ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրումը:

Հեռանկարում ենթադրվում է ստանալ շահագործողական բարձր հատկանիշներով բաղադրանյութեր, որոնք կարող են կիրառվել ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում: Հետազոտությունների արդյունքները ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից հոդվածների տեսքով տպագրվել են հեղինակավոր և գրախոսվող պարբերականներում և կամ զեկուցվել միջազգային կոնֆերանսներում:

Ամբիոնի վերամասնագիտացումից հետո ի թիվս վերոնշյալ հետազոտական աշխատանքների ուղղությունների աշխատանքներ են ծավալվել նաև դեղագործական քիմիայի ոլորտում.

1. Հատկապես կարևորվել են սկզբունքային նոր կոմպոզիցիոն նյութերի հատկությունների ուսումնասիրումը որպես իմպլանտներ օգտագործելու նպատակով:
2. Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև կենսամետաղ- կենսալիզանտ համակարգերի ուսումնասիրությունը, որը հնարավորություն կտա լուծելու բժշկական և կենսաբանական նշանակության բազմաթիվ խնդիրներ: Ինչ վերաբերվում է ամբիոնի հեռանկարային ծրագրերին, ապա մեր հետաքրքրությունների շրջանակում է ռեգիոնալ կարևորագույն նշանակության խնդրի լեռնահանքարդյունաբերության մեջ հազվագյուտ և թանկարժեք մի շարք մետաղների կորզման նորագույն մեթոդների մշակումը և ներդրումը:
3. Այս ուղղությամբ արդեն իսկ որոշ աշխատանքներ արդեն կատարվել են: